

պատճառով չէ կարելի ասել, թէ նա երբ կը հաղորդվի սուլթանին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԴԻԲԱԿՆԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿՐԿՆՈՒԹԻՒՆԸ

Այս օրերս թիֆլիսում էլի մի աղետ պատահեց, որին զո՞հ գնացին վեց թշուառ մշակներ, որոնցից երկուսը հայ գաղթականներն էին: Յոսմարի 31-ին, Միքայելեան փողոցի վրա, կուլիջանովի նոր շինվող տունը փուլ եկաւ և իր փլատակներէն իր անկողնի վեց թշուառ բանւորները վեց մարդիկ սպանեցին, փլատակներէն տակ ծածկվեցին միայն այն պատճառով, որ մի անխելճ մարդ կամենում էր հարստանալ, քիչ փող ծախսել և շատ ստանալ, իսկ քաղաքային վարչութիւնը և ճարտարապետները իրանց սովորական անտարբերութեամբ արգելք չէին լինում այդ անձի գիշատիչ հակամարտին: Շինվող տունը փուլ է եկել այն պատճառով, որ պատերը միայն մի տակ աղիւտից են եղել չինված և ներքին պատերը այնքան բարակ էին, որ լոյսը թափանցում է եղել նրանց միջից: Այդպիսի խախտում հիմքի վրա ասելու կառուցանելը վերջերս սովորական երևոյթ է դարձել թիֆլիսում: Իսկ մի կաղամկերոված սպիտակ քարէն է, որով զբաղվում են բազմաթիւ, հարստութիւն ձեռք բերելու անյաղ ջանքերով ևս: Սակայն մարդիկ, չինվում են խախտում անելու և անմիջապէս բանկերի օգնութեամբ ծախվում ու ստացած գումարով նորից կառուցանվում խախտում անելու, նորից ծախվում:

Սպէկուլանտները, կուլիջանովի պէս, միայն մի նպատակ ունեն—քիչ ծախսել, էփան նստեցնել չինութիւնը և թանգ վաճառել: Եւ ասոր ծախսել, հազար ստանալ: Նրանց հոգը չէ, թէ խախտում անելը կարող են քանգովել, թէ կարող է մեծ աղետ պատահել: Բաւական է, որ նրանք կատարել են որոշ ձևականութիւն, որով կարող են իրանց արգարացնել անպագայում: Եւ վեց մարդիկ զուր տեղ մեռնում են, այն էլ չարաչար մահով, միայն նրա համար, որ եօթներորդը կատարանայ փող դեղել, զբաղմունք լցնել վեց ընտանիք զրկվում են իրանց պաշտպանից, կերակրողից և մասնավոր են ստակալի թշուառութեան միայն նրա համար, որ մի սպէկուլանտ խաղում է նրանց կեանքի հետ, ինչպէս խաղում են փողի հետ բերძաններում:

Ո՞վ է մեղաւորը, իսկական յանցաւորը, ում վրա է ծանրանում այդ աղետի բարոյական մեծ և ստակալի պատճառանքութիւնը: Անշուշտ, ամենքը և քաղաքային վարչութիւնը, և ճարտարապետները, և սովորականութիւնը (որ իսկական մեղաւորներ են) կը սկսեն արդարանալ և դուրս վերջ է վերջը դուրս բերել, որ մեղաւորները... հէնց իրանց թշուառ մշակներն են եղել, որոնք կամեցել են մի կտոր հաց աշխատել:

Միթէ բոլորի մէջ մեռել է խելճը և ամօթի զգացմունքը:

ԲԻՇՆՆԵՐԻ ՄԵՍ ԺՈՂՈՎՐ (ժանտախտի պատճառով)

Դուռնայի դռնիցն ահա փետրվարի 1-ին, քաղաքային վարչութեան հրաւերով կայացած մի մեծ ժողով՝ ժանտախտի երկաւու դէմ միջոցներ ձեռք բերելու: Ժողովին հրաւիրված էին թիֆլիսի բոլոր բժիշկները, քաղաքային սանիտարական հոգաբարձուները, թիֆլիսի ոստիկանապետը և ուսրավայրի անդամները: Ներկայ եղողներ թիւը հասնում էր մօտ 100-ի: Բժիշկների մէջ մենք չը նկատեցինք մեր քաղաքի մի քանի յայտնի բժիշկներին, ինչպէս, օրինակ, բժշկապետ Գասպարեանց, վիրաբոյժ Բոլէշեւսկի և այլն: Նրանք, ժամը 8-ին, բացեց քաղաքապետի պաշտօնակատար պ. Կլանինսկոյ և խնդրեց բժիշկներից ընտրել մի նախագահ, որ և ընտրվեց բժիշկ Օղեսուսով: Սանիտարական տեսուչ բժիշկ Ստեփանեանց, բժշկական-սանիտարական յանձնաժողովի կողմից կարգաց մի մանրամասն ղեկուկաւ տեսութիւն անելուց յետոյ, թեւց այն բոլոր միջոցները, որ այժման բժշկականութիւնը դնել է այդ ստակալի ցաւի դէմ, և ապա առաջ բերեց այն մանրամասն ծրագիրը, որ պատրաստել է յանձնաժողովը, և որի մասին էլ պէտք է

իր կարծիքը յայտնել ներկայ ժողովը: Նրազիրն այնքան զեղեցիկ է, որ եթէ միայն նա գործադրվի բարեկամաբար, մեր կեղտոտ քաղաքը կը դառնայ մի երկրային դրախտ: Նա, ի միջի այլոց, առաջարկում է. 1) հիմնովին մաքրել քաղաքը. 2) նշանակել սանիտարական խմբեր. 3) հանգանակութիւն անել՝ աղբատներին կերակրելու համար. 4) տալ չքաւոր դասակարգին ձրի ջուր, ջրի բաղանիք, տարածել ձրի բրդալիւններ: Նա խաղաչ. Առաջարկում են ժողովին կարծիքներ յայտնել ներկայացրած ծրագրի մասին:

Մասնակց կ'է (ոստիկանապետ). Նախ քան խօսել մաքուր ջրի մասին, ես կը խնդրէի հոգ տանել, որ մեր քաղաքի ջրանցքը բաւարար ջուր տար, որովհետեւ, ինչպէս փորձը ցոյց տուեց, ամառվայ ամիսներին ընթացքում քաղաքը մի քանի օրերով զրկվում է ջրից, ջրանցքի փաթուղիներն պատճառով:

Ի վառնեմ օ (քաղաքապետի պաշտ.). Յոյս ունենեմ, որ այլ ևս ջրի պակասութիւն չի լինի: Բժ. Մ. Շահապարով. Նա առաջարկում են մի չարք միջոցներ, բայց ամենազրկաւորը մոռացութեան է տրված: Ո՞վ պէտք է իրաւոր՝ ձի աղ ծրագրերը: Յանձնաժողովը չը բաւականանալով բուն սանիտարական մասով, սանիտարական խմբերին յանձնում է նոյն իսկ հանգանակութիւններ անել, աղբատներին կերակուր տալ: Իմ կարծիքով, նախ պէտք է որոշել բժիշկներին դերը, և ամենից առաջ մի մարդ ուղարկել Պարիզ՝ հակաժանտախտային միջոցները ուսումնասիրելու համար:

Բժ. Ստեփանեան. Մենք արդէն դիմել ենք Պարիզ, դեռ օրը թափում են կը խնդրէի կէտ առ կէտ քննել առաջարկված ծրագիրը, և ամենից առաջ ցոյց տալ, թէ որտեղ դուրս տանել քաղաքի կեղտոտութիւնները, արդեօք թափելը կուրի մէջ, թէ մի այլ տեղ:

Բժ. Նաւասարդեան. Ինչպատի ունենալով բոլոր եղող և լինելի առաջարկութիւնները, ես առաջարկում եմ ընտրել մի յանձնաժողով և ցրվել:

Բժ. Բաբայան. Մեր այս տեսակ ճառերով և ժողովներով սարսափ ենք աղբում ժողովրդի վրա, այդ պատճառով, իմ կարծիքով, չը պէտք է խօսել ժանտախտի մասին, այլ լոյս քաղաքի սանիտարական բարելաւութեան մասին:

Ի յիշատի Ն. Արզումանյանի (նախկին քաղաքապետի): Ես կառաջարկեի չը չեղվել հարցերից և կէտ առ կէտ քննել յանձնաժողովի ծրագրերը: Այդ հիման վրա ես կը խօսեմ ծրագրի առաջին կէտերից մէկի մասին, այն է սանիտարական խմբերի մասին: Նրազիրը առաջարկում է 26 խումբ, այնքան, որքան պոլիցիական օկուպացի կայ: Սակայն որտեղից գտնենք այդքան մարդիկ. 1892 թվ խօսքայի դէպքը ցոյց տուեց, որ մարդիկ չեն գտնվում: Ես կարծում եմ, որ աւելի յարմար կը լինի բաւականաճ ուշադրութիւն թուլ և կազմել միմիայն 10 սանիտարական խմբեր:

Ձայնաւոր Ռ. Բաբայան. Ընդունելով սանիտարական հոգաբարձուների այն թիւը, որ այժմ կայ, այն է քսան: Նորերին թիւը հրաւիրի ուսրավան:

Ձայնաւոր Բաղդասարեան. Ուշադրութիւնների թիւը չէ կարելի ղեկավարել, որովհետեւ մի քանի մասերում, օրինակ արիստոկրատիական, սանիտարների այնքան էլ պէտք չը կայ, մինչդեռ միւս մասերում, օրինակ 8-րդ ուշադրութիւն մէջ մի քանի սանիտարներ են հորկաւոր, որպէս զի գործ կարողանան կատարել:

Ձայնաւոր Շահապարով. Խօսում են սանիտարական միջոցների մասին, բայց մոռանում են գլխավորը՝ աղբատներին: Անա դրանց մասին պէտք է մտածել, որովհետեւ ամեն մի հիւանդութիւն առաջ է դալիս աղբատութիւնից (աղմուկ):

Բժ. Ստեփանեան. Ես կրկին խնդրում եմ կարծիք յայտնել ծրագրի այն կէտի մասին, որը վերաբերում է քաղաքի մաքրման:

Բժ. Առաջակով. ձիչէ որ դա գլխավոր հարցերից մէկն է... Մեր քաղաքի ամբողջ ղեկանք տարիներին ընթացքում ծծել է իր մէջ անչափ կեղտոտութիւններ, որոնք և հիւանդութեան բուն կը դառնան: Այդ պէտք է ոչնչացնել:

Բժ. Գորոշեւիչ. Այդ անմաքրութիւններից աղբատները համար, ես կառաջարկեմ հեղուկ անմաքրութիւնների համար փոսեր փորել, իսկ պինդ անմաքրութիւնների համար յատուկ

տակաւորներ դնել տալ բոլոր տներում, և այդ կարելի է անել երկու շաբաթում (աղմուկ):

Բժ. Պարսկի. Իմ կարծիքով, անմաքրութիւնը կուրի մէջ թափել անկարելի է և վերանասկար: Միակ միջոցը այս բն է, և դժուար չէ քաղաքից դուրս վաճարաններ չինել՝ անմաքրութիւնները այրելու համար:

Բժ. Վ. Արծրունի. Կուրի մի քանի տեղերում կան պլատիւններ, ինչպէս, օրինակ, վանքի դիմացինը, որոնք կեղտոտութիւնների և փաղեղ կենտրոններ են դարձել: Գրա վրա ուշադրութիւն դնել 92 թվին, բայց ոչինչ չեղաւ, և մինչև այժմ էլ այդ պլատիւնները գոյութիւն ունին: Գրա դէմ միջոց պէտք է ձեռք առնել:

Բժ. Խոնդաղով. Անմաքրութիւնները կուրը ածելուն ես միանգամայն դէմ եմ:

Մասնակց կ'է (ոստիկանապետ). Նոյն իսկ օրէնքը արգելում է կեղտոտութիւնները դետի մէջ ածել: Այդ մասին յատուկ օրէնք կայ:

Բժ. Պարսկի. Ես առաջարկում եմ հետեւալ բանաձեւը.—հեղուկ անմաքրութիւնները թափել կուրի մէջ, պինդը՝ (չը փող) ուր կամ միւս տեսակ պինդը (փող) այրել:

Ձայնաւոր Բայց ինչպէս պէտք է ջնկել... (ծիծաղ)...

Ի վառնեմ օ (քաղ. պաշտ.). Ես կրկնում եմ այն առաջարկը, որի մասին խօսք կայ ուսրավայրի մէջ. որոշել կուրի վրա որոշ տեղեր և անմաքրութիւնները թափել այնտեղ, յարմարեցնելով այնպէս, որ արեւը չը կեղտոտվեն, այլ ջրի յորդ հոսանքը ողողի և տանի:

Բժ. Վարդանեան. Ես իբրեւ բժիշկ, միանգամայն դէմ եմ խոհանոցի անմաքրութիւնները դետի մէջ ածելուն, և կարծում եմ, որ բժիշկներին իւրաքանչիւրը դէմ պէտք է լինի դրան, իբրեւ վնասակար միջոցի:

Բժ. Լուկին. Իմ կարծիքով, մի այնպիսի ժողովում, ուր կան մասնագէտների հետ և ոչ-մասնագէտների, անյարմար է քննել ծրագրի այնպիսի կէտերը, որոնք բուն բժշկական են, և առաջարկում եմ այդ ծրագիրը նախ ենթարկել բժշկական ընկերութեան քննութեան:

Բժ. Վարդանեան (վեաներիս). Այստեղ միայն բժշկական հարցեր չեն, կան և բուն գործնական հարցեր, որ աւելի յարմար է այս ժողովում ըննել: Բայց դրանից, մի մոռացե՛ք, որ պէտք է շատել և ոչ թէ յետաճել:

Խօսք օ (ուսրավայրի անգամ). Այդ մասին առաջուց պէտք է ասել: Մերոյ չորս ժամ ժողովը դրաւ մէջ այդ հարցով, և այժմ երբ 11 ժամն է, նոր ես հարց յարուցանում բժշկական ընկերութեան յանձնելու մասին:

Բժ. Լ. Օրիս-Մէլիքեան. Բժշկական նշանակութիւն ունեցող հարցերը, իմ կարծիքով, այս ժողովում չէ կարելի քննարկել: Զանի որ այս ժողովը աւելի խորհրդակցական նշանակութիւն ունի:

Բժ. Լուկին. Ես խնդրում եմ, պ. նախագահ, իմ առաջարկը՝ այն է ծրագիրը, կամ գոնէ նրա այն կէտերը, որոնք բուն բժշկական են, յանձնել նախ Բժշկական ընկերութեան ժողովի քննութեան, որը կը կայանայ երեքշաբթի օր, փետրվարի 4-ին:

Առաջարկը քննարկվեց և ձայների մեծամասնութեամբ անցած: Ժողովը փակվեց 11 ժամին:

ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կերակրի, փետրվարի 2-ին, տեղի ունեցած մի բազմամարդ ժողով՝ Կայսերական կողմից Գերմանական ընկերութեան ղախչումի խորհրդակցելու այն նոր ընկերութեան մասին, որ առաջարկում է հիմնել պ. Բաղեցիկի Պարոնը, ինչպէս յայտնի է, արդէն երկու դասակարգութիւն կարգաց մեր քաղաքում մանուկների անողջապահութեան մասին: Նոր հիմնվելի ընկերութեան նպատակը պէտք է լինի օգնել երկու սեռի մանուկներին կրթութեան և պաշտպանել լինել անխնամ մնացած մանուկներին: Այդ տեսակ ընկերութիւններ կան արդէն Մոսկւայում, Պետերբուրգում, Օդեսայում և Եկատերինոպոլում. հիմնվում են խեղճութեամբ, Պրոպագանդայում, Տգաւարողում և Եկատերինոպոլում: Իսկ արտասահմանում նրանք վաղուց գոյութիւն ունեն:

Ժողովականները համակրութեամբ վերաբերվեցին Բաղեցիկի առաջարկութեան և ընտրեցին տասներկու անձից բաղկացած մի յանձնաժողով, որ պէտք է երկու ամսվա ընթացքում կազմի

նոր ընկերութեան ծրագիրը, օգտվելով այն դրական նիւթերից, որ արդէն կան, աչքի առնելով կողմնակի առանձին պայմանները ու յետոյ ներկայացնի պատշաճաւոր իշխանութեան հաստատութեան:

Ժողովականները յայտնեցին իրանց շնորհակալութիւնը պ. Բաղեցիկին, որ նախաձեռնող անդամացաւ այս գործում:

Յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Կուլիքեան (նախագահ), Բժ. Լ. Օրիս-Մէլիքեան, Ջաւանկիչ, տ. Կլանտ, Գրեգորի, Բժ. Խոնդաղով, Պրիստոլով, Բժ. Ջարգարեանց, Սիւեդեր, սկայա, Մուրաչկո, Սիւեդիկով և Ջարգարեանց:

Ժողովականների մեծ մասը կանայք և օրիորդներ էին: Դաշիճը լի էր, մասնակցողների թիւը հասնում էր եօթնասուներ:

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԱՅԻՆՈՒՆՑ

Յունվարի 28-ին

Երէկ Նախադին Առաւմանից իրաւունք ստացանք փող հաւաքելու յօգուտ գաղթականների. պիտի հաւաքէ Միխիթար վարդապետը: Այսօր սկսեցին քաղաքը չըջել Միխիթար վարդապետը և Միքայէլ Մահտեսեան, ու մինչև երեկոյ ժողովեցին 2735 բուրլի: Ահա նուիրատուների ցուցակը՝ Գ. Պոպով—200 բ., Բ. Պոպով 200 բ., Գ. Գրաւիլիքեան 200 բ., Մ. Պալապանեան 300 բ., Կ. Խոնեան 100 բ., Մ. Սակերեան 75 բ., Գ. Կարապետովեան 200 բ., Մ. Պոպով 200 բ., Կ. Խոնեան 200 բ., Կ. Խոնեան 100 բ., Խ. Ա. ձեռեան 100 բ., Գ. Սալիքեան 100 բ., Բ. Նաւրեան 100 բ., Ա. Շաքչիկեան 50 բ., Գ. Զալուչեան 100 բ., Խ. Զալուչեան 100 բ., Վ. Ալեւեան 100 բ., Մ. Ալեւեան 100 բ., Գ. Մելքոնեան 100 բ., Մ. Կաստանայեան 50 բ., Ս. Ա. ձեռեան 50 բ., և Միսաս Սալիքեան 10 բուրլի: Ընդամենը 2735 բուրլի: Այս ցուցակի մէջն է հարուստների մեծամասնութիւնը, որեւին ուրախացի յոյսով չէ.—միայն այն Միսաս Սալիքեանը, որ բարեհաճ է 10 բուրլի նուիրել, կարող էր ինքը այդ բոլոր գումարը՝ 2735 բուրլի տալ:—Բայց թողնե՛ք այդ խնդիրը, մենք՝ նոր-նախիջանցիներս՝ հացի, ապրուստի կարօտ չենք, և կարօտեալներին չենք հասկանում: Կուշաքը քաղցածին մանր կը բրդէ...

Ընտրութիւններ, ընտրութիւններ, դարձեալ ընտրութիւններ... Ընտրում ենք երեցիկներ, ընտրում ենք հոգաբարձուներ թեմական դպրոցի հայոց Աղբատաց հոգաբարձութեան: Եւ Կոյր. կուսակցական ուղին անողապա են մեր ժողովներում: Մենք ընտրում ենք Պետրոսին ոչ թէ նրա համար, որ այդ Պետրոսը ազնիւ մարդ է և օգուտ կը տայ այս այն հաստատութեան, այլ նրա համար, որ Պետրոսը բարեկամն է կամ թիշամին: Հէնց դրա համար է, որ միջանում բոլորը սկսում են ընտրվել իսկ գործել ոչ ոք չէ ուղում: Ընտրում են միայն ախտի վրա բաղմունք: Միւս կողմից պատիւ է բերում մեր ժողովրդին, որ նա ջնկում է ինտելիգենտներին և ընտրութեան ժամանակ միշտ զերադասում է նրանց. բայց արի տես, որ նոյն իսկ ինտելիգենտները մոռանում են իրանց իղեալները, ցնորք և երազ համարելով դրանց. ու այդպիսով այն վարկը, որ մենք՝ ինտելիգենտները՝ վայելում էինք ժողովրդի կողմից, հետզհետէ նուազում է, որովհետեւ մենք հեռ չվիւլով ժողովուրդը նկատում է, որ ջոկ բան է ուսում և ջոկ բան է աղետութիւն, ժողովուրդը նկատում է, որ մենք՝ ինտելիգենտներս՝ նոյն պատկառանքով խնայում ենք մեր գլուխները մամուլի առաջ, որպէս ամբողջ և խոնարհելով գլուխներս, մի և նոյն ժամանակ մենք փչում և ոտնակում ենք անում ամենայն ինչ, որին հաւատացել ենք, որը սիրել ենք և որին դուրս է ուսումը: Թէ կեանքի պայմանները ծանր են մեզ համար: Ոչ, այդ սուտ է: Կեանքի պայմանները միշտ ծանր են եղել: Մեր սրտերն են քաղաքի և մենք դեռ երիտասարդութիւն չը տեսած, ծեղրացել ենք, միայն մի Աստուած ճանաչելով—մեր Եւր...

Հոգեւոր դպրոցի համար 5 հոգաբարձու ընտրվեցան, 5 համալսարանականներ, երեք իրաւաբան և երկու բժիշկ: Տեսնե՛ք այդ համալսարանականները օգուտ կը բերեն դպրոցին, որ ժողովուրդը յանձնում է նրանց, թէ ոչ... Վալքալապ հոգաբարձութեան մէջ էլ ընտրվեցին

համարադրանքները, իսկ այդ համարադրանքները կարող է մաքրություն հետևելը ինչ-պես որ տան այդ համարադրանքները համարադրանքները: Մենք չենք ուզում ասել, որ համարադրանքները բոլորովին անօգուտ են Նոր Նախիջևանում, բայց ներքին է մեզ կարծելու, որ նրանց չափ է տրված և չափ պիտի պահանջվի:

Գր. Չալոյան

ՆԱՄԱԿ ԲԱՆԱԿԱՆԻՑ

Յունվարի 30-ին

Յունվարի 27-ին, երեկոյան 7 ժամին, չարագուշակ հարիւրաւոր չուխները գոռեցին, որ հըրդեհ է: Մի ժամկէ մէջ լիանօղեանցի 5 նաւթահորերը վառվեցին. հրդեհը հակապահանքով յարձուգեց ամբողջ կէս վերստաչափ տարածութեան վրայ. նախ Արափեկեանցի չորս նաւթահորերը կլանեց, ապա անցաւ ձգնաւորեանց-Աղաճեանցի 5 նաւթահորեր լափեց, իսկ յետոյ թուալեանցի և Միւրդեկեանցի նաւթահորերը: Մի խօսքով, գիշերվայ ժամը 12-ին արդէն 30-աչակ հորերի հակապահանքը բոլորակաւ վառ էր անապին տարածութիւնը: Այլմէջ մօտ 300.000 պուղ պահեստի նաւթ միմիայն Արափեկեանի շտեմարաններում: Հրդեհի պատահած անցը հորերը այնքան խիտ են, որ եթէ փոքր քանի լինէր, լափելու էր ամբողջ Բալխանիի կէսը:

Ընդհանուր փնտը կարելի է հաշել մօտ 100.000 ռուբլի: Ի միմիայն ընթերցողներին, կասեմք, որ բոլոր կորուստ ունեցողները ամենաաջող գործերի տերեր են, որոնց համար այդ փնտը հաւասար է զրօի:

Յայտնի նաւթատէր Մանթաշեանի ֆանտանը ստատիկ խիտ է. մինչև այսօր, մօտ 20 օրում, լափել է արդէն 11 միլիոն պուղ. այժմ իւր փուռ 12-րդ միլիոնը: Օրեկան խիտ է 400.000 պուղ, որից խօսքով օրեկան—32.000 ռուբլի: Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԱՆ

Թիֆլիս, փետրվարի 1-ին

Յուսով եմ թէ իմ այս երկտողը էլ կը հիւրընկալեք որպէս պատասխան «Մշակի» № 12-ի մէջ լոյս տեսած՝ պ. Սիմէոն Պառաւեանցի նամակին, որով պարտքը յայտնուել իր անբուխականութիւնը իրանց գործի աշխատանքի ընթացքի համար, ինձանից՝ որպէս հաշտարարի դեր կատարողից, հրապարակական բացատրութիւն է խնդրում:

Արդարեւ, ճիշդ այնպէս է իրողութիւնը, ինչպէս որ պ. Պառաւեանցը նկարագրել է իր նամակում, ուրեմն էլ ինձական՝ իմ վերաբերեալ ինչ կայ այդտեղ, որ ես հրապարակական բացատրութեան եմ հրաւիրվել: Այն մարդը—պ. Սարգիս Բաժալեանցը, քանի մի անգամ անձամբ ինձի դրեց ինձ, որ ես աշխատեմ հայտնեցնել իրան և պ. Պառաւեանցին, ես էլ յանձնառու եղայ այդ լաւ գործը—որպիսին է հայտնութեան գործը—գլուխ բերել:

Թէ ես աշխատել եմ երկու կողմի համար էլ, թէ ես աշխատել եմ, որ իմ ստանձնած պարտականութիւնը ամենայն ճշգրտեամբ կատարեմ և մանաւանդ թէ ճիշդ թափել—այս ամենազուրկ է—որ երկու հակառակորդների մէջ ապագայում անգամ որ և է թիւրիմացութիւն չը մնար, այդ պարզ երևում է «Մշակի» խմբագրութեան ուղղած՝ պ. Ս. Պառաւեանցի նամակից: Հետեւապէս ես ոչ միայն անպարտ եմ այդ գործում, այլ և անպատասխանատու՝ գործի այդ տեսակ ընթացքի համար, գործի, որի պատասխանատուութիւնը գլխովին ընկնում է միմիայն այն անձին, այն մարդու վրայ, որի խնդիրը միատուրութիւն ունեցայ անկեղծ համարել:

Լեւոն Մելիք-Աղամեանց

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԱՆ

Կաղզուան, յունվարի 10-ին

Խնդրում ենք «Մշակի» առաջիկայ համարներից մէկում տպագրել հետեւեալը: «Մշակի» № 2-ի մէջ, պ. Մ. Ղազարեանց, չը գիտեմ ինչից զրգոված, հաղորդել է, որ իբր թէ զաղխական հիւանդներին հակող բժիշկ Կաճկաճեան հիւանդանոց յաճախում է չաքաղել երկու անգամ:

Պարտք ենք համարում յայտնել, որ վերալիշակ բժիշկը յաճախում է հիւանդանոց ոչ թէ չաքաղել երկու անգամ, այլ իւրաքանչիւր օր և չափ անգամ էլ օրը երկու անգամ, որից վարչութիւնն չափ գոհ է առ այժմ:

Վարչութեան նախագահ՝ Արտ. Ռոստոմեանց
Քարտուղար՝ Մկրտիչ Ժաճ. Տէր-Գրիգորեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 1-ին տեղի ունեցաւ Թիֆլիսի լիգա թամաշեանի թաղումը: Առաւօտեան 10 ժամին արդէն անապին բաղմութիւն էր հաւաքված հանգուցեալի տան առաջ՝ վերջին յարգանքը ցոյց տալու նրա յիշատակին: Այդ հասարակութեան մէջ կային թէ ինտելիգենցիայի, թէ վաճառականների, թէ հասարակ ժողովրդի իրական սեռի բաղմութիւն. ներկայացուցիչներ Նոյն տեղը չարքով կանգնած էին Արհեստագիտական դպրոցի աշակերտներին, ձեռքերին թափածաղիկներ փռնելով բռնած, իրանց վարժուհիների հետ միասին: Յուրաքանչեւ թանկ անուր հանդէսը անցաւ Բարեաւորնիկի, Լօրիս Մէլիքեանի և Վելիամինովսկայա փողոցներով դէպի Նորաշէնի եկեղեցին: Պատարագից յետոյ հանգուցեալի մարմինը հողին յանձնվեց եկեղեցու բազում, ուղիղ Նորաշէնի՝ այժմ փակված դպրոցի դիմաց: Արհեստագիտական դպրոցի աշակերտներին իրենց մէջ, օրիորդ Վարաչեանց, կարգաւ մի փոքրիկ դամբանական, բոլոր աշակերտներին հիւրընկալելով, որի մէջ նրանք պարզ, բայց անկեղծ բառերով ողբում էին իրանց անմոռանալի զեկավարի մասը: Այս մի երկար դամբանական անցաւ եղիչէ վարդապետ Մուրադեանց, չեչուելով զխաւորապէս կնոջ դիմաց և նշանակութեան վրայ մեր հասարակական կեանքում: Հանգուցեալի դագաղը դարձաւ զարմարված էր բաղմութիւն պատկերով: Կատարեց զրված էին, ի միջի այլոց՝ Թիֆլիս քաղաքի կողմից (արձակուրդ պահել), Արհեստագիտական դպրոցի աշակերտներին, «Մշակի» խմբագրութիւնից, վաճառականներից (արձակուրդ), Արհեստագիտական դպրոցի վարժուհիներից, Առեւտրական բանկի ծառայողներից և այլն: Թաղմանը ներկայ էին բաղմունքի ուղարկված քաղաքացիների պատմական հետ միասին, որը և դուռնայի կողմից ցաւակցութիւն յայտնեց հանգուցեալի ամուսնուն՝ Միքայէլ թամաշեանին, ձայնաւորները, Ներսիսեան դպրոցի հոգաբարձուները, և Թիֆլիսի հայոց թեմական առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոս Սուրենեան:

Մեղ հաղորդում են հետեւեալ լուրը, Թարի-զից, յունվարի 29-ից: «Ղարազաղի Շալու գաւառի դատարար Միւրա Ալաքբար խանը ապուստամբել է Շահի կտաւախութեան դէմ: 12—15 հազար զինուորներ հաւաքելով իր շուրջը՝ Նախըն իրան անուանել է Ղարազաղի համար Աքբար-Շահ: Թարիզից թաղաժողովը 200 մէշաժող է ուղարկել ապստամբապետին բռնելու: Ասում են, որ նա անցեալ օրը եկել է Թարիզ և Մուշէլիդի տունը բռնաւ է մտել: Լուրի ճշգրտութեանը մենք երաշխաւոր չենք:

Նշանաւոր ռուս բանաստեղծ Պուշկինի մահվան վաթսուներեակի լրանալու առիթով, Թիֆլիսի գրական յրջանում միտք յղացաւ մի օր և մշտական ձեռնարկութեամբ յանդիմանել բանաստեղծի յիշատակը Կովկասում: «Кавказ» լրագրի խմբագիր Վելիչկովի հրաւերով կերպի, փետրվարի 2-ին, կայացաւ Թիֆլիսի մամուլի ներկայացուցիչների մի ժողով, յիշեալ լրագրի խմբագրատանը: Այդ ժողովում վճռվեց կազմել ռուսերկրպետական Պուշկինեան ֆոնդ գրական նպատակների համար, իսկ այդ ֆոնդի առաջին հիմնադրարը դնելու համար, առաջիկայ կերպի օր, փետրվարի 9-ին, սարքել մի երաժշտական դրական առաւօտ արքունական թատրոնում: Ժողովում եղան հետեւեալ առաջարկութիւնները: 1) պահել մի օրդեղի Պուշկինի անունով: 2) տպագրել Պուշկինի գրութեանը տեղական լեզուներով, յանձնելով գումարը վրաց գրադիտական և հայոց Հրատարակչական ընկերութիւններին այդ նպատակով: 3) նոյնը անել անմիջապէս ֆոնդի վարչութեան միջոցով: 4) ֆոնդի գումարով թէ Պուշկինը թարգմանել տեղական լեզուներով և թէ տեղական բանաստեղծների ընտիր գրութեանը թարգմանել:

5) բանալ մի դպրոց Պուշկինի անունով տեղական լեզուների բաժանմունքներով: 6) կազմել մի գրական ֆոնդ այն հիմունքներով, ինչպիսին կայ Պետերբուրգում, գրագէտներին օգնելու նպատակով: 7) պրեմիաներ նշանակել Պուշկինի վերաբերեալ գրութեան համար և այլն: Նախապատրաստական երկրորդ ժողովում կը ընկնէ այս և ուրիշ նոր առաջարկութիւնները՝ որոշ եղրակայութեան գաւառ համար: Ֆոնդը կը սկսի իր գլխաւոր գործունէութիւնը երկու տարուց յետոյ, երբ պէտք է տանի Պուշկինի ծննդեան հարիւրամեակը:

Լսում ենք, որ մեր նկարիչ Գէորգ Բաշինջաղեան տարաւ Պետերբուրգ իր վերջին աշխատութիւններից չորս պատկեր, որոնք ներկայացնում են Կովկասի տեսարաններ: Այդ պատկերները պէտք է ցոյց հանվեն գեղարուեստների Ակադեմիայի ցուցահանդէսում, որ բացվելու է փետրվարի 24-ին:

Թիշեցնում ենք մեր հասարակութեան, որ այսօր, փետրվարի 4-ին, վրաց ազնուականների թատրոնում սիրողների ներկայացում պէտք է լինի բարեգործական նպատակով: Աւելորդ չենք համարում ասել և այն, որ այսօր արքունական թատրոնում տեղի չէ ունենալու դիրքեր Տրուֆ-ֆիլի բենեֆիսը, ինչպէս այդ նշանակված էր առաջ:

Ներքին գործերի մինիստրութիւնը դիմել է «Կարմիր խաչի» ռուսաց ընկերութեան, առաջարկելով խմբեր պատրաստել Կովկաս և Ասորական ուղարկելու համար, եթէ այդտեղ երկայ ժամտախտը:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց, Մոսկվայում, Խաչաճի Ժամհարեանի հրատարակութեամբ լոյս տեսած «Խաչատուր Աբովեանի երկերը» գիրքը, որ բաղկացած է 540 քառամալ երեսներից: Գրքի գինը մի ռուբլի է, ծախվում է Աբովեանի որբ թոռների օգտին: Գրքի մասին մենք առանձին կը խօսենք:

ՀԱՄԱԳՈՐԾԱՆ ԳԻՒԼԵՐ ԵՎ ԳՐՈՒՄ ԵՆ. «Մեր գիւղում տարածվել է տիֆ և զիֆտերիս: Մօտ օրերս մի քանի մահուան դէպքեր եղան զիֆտերիսից: Բացի երեխաներից մեռնում են նաև հասակավոր մարդիկ: Սրանից մի քանի օր առաջ գիւղացիների խնդրելով, Գալուստ վարդապետի ձեռքով, այստեղ բերվեց Սեանի Սուրբ Նշանը, որպէս զի հիւանդութիւնը փոքր ինչ թուլանայ: Միամտաբար յոյս դնելով սուրբերի վրայ, գիւղացիները զուրկ են մնում բժշկական օգնութիւնից, որը, դժբաղդաբար, դեռ ես մուտք չէ գործել մեր գիւղում:

ՍՂՆԱԽՈՅՑ ԵՎ ԳՐՈՒՄ ԵՆ. «Աւելորդ չենք համարում հաղորդել, որ Թիֆլիսի, Բարձրագոյն հաստատված «Կովկասեան զեղային ապրանքների ընկերութիւնը», յունվարի 10-ից այստեղ ծախում է անդիլական արջապ, Մարտէլի ծծումբ և բոլոր մեքենաները՝ վաղի բժշկական համար, մատչելի գներով: Գրա հետ առնողներին ձրի բաժանում են վաղի բժշկական վերաբերեալ գիւղացեան Ս. Հախիբեղեանի, վրացերէն լեզուով տպած գրքիկները: Ընկերութիւնը մարտի 15-ից բաց կանի իր բաժանմունքը Վէլիցիիէ և Կարաբանակ գիւղերում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայերը Բօստօնում

Ամերիկայի Բոստոն քաղաքում հրատարակվող «The Woman's Journal» շաբաթաթերթը մեծ համակրութեամբ է վերաբերվում հայերին և համարեա իւրաքանչիւր համարում տալիս է հայ պանդուխտների մասին տեղեկութիւններ, կամ հրաւեր է կարգում օգնել նրանց գործ տալով և սովորեցնելով զանազան արհեստներ: Օրինակ, այս տարվայ 3-րդ համարում խմբագրութիւնը ասում է հետեւեալը.

«Մի քանի երիտասարդ հայեր ուղարկվեալ պատրաստ են աշխատելու ձրիապէս բժիշկների մօտ, կատարելով նրանց պատուէրները: Նրանցից մէկի մասին Զիվեմ հիւպատոսը յայտնում է, որ նա առաջ ուսուցիչ է եղել Թիւրքիայի

գաղութներից մէկում և գիտէ անգլիերէն: Մի ժամագործ գործ է որոնում: Նա երբեմն եղել է հարուստ, բայց կատարածների միջոցին կորցրեց ամեն ինչ: Նրան ճանաչողները հաւատացնում են, որ նա շատ լաւ ընտանիքից է և լաւ բնաւորութեան տէր անձն: Մի հայ, որ շատ հմուտ է գորգեր մաքրելու, կարկատելու, ներկելու գործին, որոնում է տեղ կամ խնդրում է մասնաւոր պատուէրներ և յանձնարարութիւններ: Վանից եկած մի հայ, որ շատ հմուտ կերպով պատրաստում է սենեակի արդուգորգ, գործ է որոնում. նրա մեծ որդին հիւան է և գիտէ անգլիերէն: Բացի այդ կայ հայերի մի խումբ, որ տեղ է որոնում ծառայութեան տների մէջ: Աւելացնելու և այն, որ հայկական արգիւնդները Ամերիկայում սկսում են նշանակութիւն ստանալ: Նոյն լրագրի մէջ, օրինակ, տպվում է հայկական գորգերի և կարպետների մասին յայտարարութիւն և բերված են վիպութիւններ նրանց լաւ յատկութեան մասին:

«Nord» լրագրի մէջ տպված է հետեւեալը կրեական խաղութիւնների մասին. «Չոր նայելով այդ խաղութիւնների յուզիչ բնաւորութեան, մենք պէտք է այնու ամենայնու նրանց մեծ նշանակութիւն չը տանք: Սպասում են, որ շուտով կրեական զանազան երկիրներից ժամադրվեն, որոնք պէտք է մտնեն ժամադրման յի նոր կազմութեան մէջ և այն դէպքում, երբ այդ ժամադրման անկարող կը հանդիսանայ կարգ հաստատել մուսուլմանների մէջ, մեծ պետութիւնները կը դիմեն աւելի իրական միջոցների: Ահա տարակ մեծ պետութիւնները հաստատ կերպով վճռել են թոյլ չը տալ խաղութիւններին աճումը և պէտք է աշխատեն ձեռք բերել կրեական խաղաղացումը և ամբողջ օսման նախ կայսրութեան մէջ կարգ հաստատելու չը նայելով ոչ պալատական ինտրիգներին և, Պօլսում, ոչ էլ ֆանատիկոսութեան, որ նահանգներում գրգռում են մուսուլմանների մէջ:»

«Gaulois» լրագրից, Կ. Պօլսից, Սօֆիայի վրայով ստացած տեղեկութիւնների հիման վրայ, հաստատում է, որ Անգլիան հաւաքել է Բեզիկի ծոցում (Մարմարեան ծովի մուտքում) 40 նաւերից բաղկացած նաւատորմ, որ Ռուսաստանի և Ֆրանսիայի միացեալ նաւատորմից երկու անգամ աւելի է իր թվով: Եթե այդպէս, մեծ պետութիւնները կը թուան և Պօլսում որ և է մի քան պատահի, անդէլական նաւատորմը, չը սպասելով ռուսաց և ֆրանսիական նաւատորմին, կը մտնի Թիւրքիայի մայրաքաղաքը և կը տիրապետի նրան:

Կ. Պօլսից հեռագրում են «Frankfurter Zeitung» լրագրին. «Եւրոպական զեկայաները չեն յօշափել ոչ իրանց խորհրդակցութիւններին, ոչ վերջնական արձանագրութեան մէջ ստիպողական միջոցների հարցը, որոնք պէտք է գործադրվեն այն դէպքում, երբ սուլթանը մերժելու լինի մեծ պետութիւնների առաջարկութիւնները: Այդ հարցի լուծումը թողնված է կարինէտներին: Սակայն Պարիզից ստացված զիպլօմատիական հեռագիրները հաղորդում են, որ կոմս Մուրավիէվ, Պարիզի թիւրքաց զեկայան Միւնիխի բէյի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ, Հանօստ մինիստրի ներկայութեամբ, յայտնել է, որ անպայման անհրաժեշտ է ընդունել Բէֆօրմների ծրագիրը, աւելացնելով, որ հակառակ դէպքում սուլթանը անձնապէս կենթարկվի պատասխանատուութեան:

Անգլիական կառավարութիւնը յետ է կանչել Վանի փոխ-հիւպատոս մայր Ռիֆլամանին և նրա փոխարէն ուղարկել է կապիտան Էլլիօթին: Վանի հայերը այդ լուրը կը դուռնեն մեծ ուրախութեամբ, որովհետեւ Ռիֆլաման հայերի մէջ ժողովրդականութիւն չէր վայելում:

«Daily News» լրագրի Վիեննայի թղթակիցը հեռագրում է փետրվարի 4-ից հետեւեալը. «Սուլթանը դիմեց Պետերբուրգի կառավարութեան, բողոքելով այն բանի դէմ, որ զեկայանները զաղտնի խորհրդակցութիւններ են անում և միջամտում են Թիւրքիայի ներքին գործերի մէջ, բայց ստացաւ շատ խիտ պատասխան, որի միտքն այն էր, թէ ռուսաց կառավարութիւնը ոչինչ չէ կամենում լսել այդ առարկայի մասին:»

